ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՄՏԱՎՈՐ ԹԵՐԶԱՐԳԱՑՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ
ԵՐԵԽԱՆԵՐԻ ԹԻՎ 11 ՀԱՏՈՒԿ (ՕԺԱՆԴԱԿ) ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ

0071, Երևան, Նուբարաշեն 6-րդ փողոց, 1-ին շենք, հեռախոս 010-47-52-40, E-mail: 11hatukdproc@mail.ru

№ Ե-117 «18» դեկտեմբերի 2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՄՏԱՎՈՐ ԹԵՐԶԱՐԳԱՑՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ
ԵՐԵԽԱՆԵՐԻ ԹԻՎ 11 ՀԱՏՈՒԿ (ՕԺԱՆԴԱԿ) ԴՊՐՈՑ»
ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ԱՆԱՀԻՏ ԵՆԳԻԲԱՐՅԱՆԻՑ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄ

Համաձայն «Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ (օժանդակ) դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Ֆոտոն» ՍՊԸ -ի (այսուհետ՝ Վաճառող) միջև կնքված «Պետության կարիքների համար սննդամթերքի մատակարարման» **ԵՄԹԵՀԴ-ԳՀԱՊՁԲ-23/02-3** ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի) Հավելված N 1-ով նախատեսված ժամկետում և Պայմանագրի 1.1 կետով սահմանված կարգով՝ «Ֆոտոն» ՍՊԸ -ն պարտավոր էր պատվերը ստանալու պահից սկսած 3 աշխատանքային օրվա ընթացքում մատակարարել Գնորդի կողմից պատվիրված ապրանքները՝ համապատասխան քանակներով, սակայն մատակարարումը չի իրականացվել:

«Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ (օժանդակ) դպրոց» ՊՈԱԿ-ը, ղեկավարվելով գնումների մասին օրենսդրությամբ , ինչպես նաև Պայմանագրի 2.1.7 կետի պահանջներով, միակողմանի /լրիվ/ լուծել է կնքված Պայմանագիրը:

Պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում սույն թվականի դեկտեմբերի 4-ին և պայմանագիրը դեկտեմբերի 4-ի դրությամբ համարվում է լուծված: Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդհոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետով և 2-րդ մասով՝«Ֆոտոն» ՍՊԸ -ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ _____ Ա. ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

Կատարող՝ գնումներ համակարգող Վ. Գասպարյան